Պարույր Սևակ

Աբովյանում

Ծանոթ է այստեղ ամեն քարը
Եվ փոշու հատիկը անգամ.
Նույն ժպիտն, օ, քանի անգամ է
Նույն դեմքին ճառագել անկամ:
Ճառագել, բռնկվել անհասցե
Ինքն իրեն ու ինքն իր համար,
Եվ որքան, որքան եմ որսացել
Ժպիտն այդ անհասցե
Եվ ինձ, և ոչ ինձ համար...
Բայց հիմա, ինձ հետ ես հիմա դու
Ու վեր ենք բարձրանում ցածից.
Եվ ուրիշ ժպիտ չեմ նկատում
Քո այրող ժպիտից բացի:
Այս համեստ մեր Աբովյանում,
Որ սակայն թվում է մեզ անծայր,
Որ մեզ հետ վերև է բարձրանում,
Անցնում է մեր ուղին անցած:
Ուր երեկ մեր ձեռքով ենք կերտել
Մեր տան հետ մեր բախտն ու հույսերը:
-Այստեղ են բոլորը մկրտվել,
Մկրտենք նաև մենք մեր սերը...

30.VII.1947թ.

Յաւուրց Պոեմ